«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ՀՀ, 375012, ք.Երևան, Բուզանդ 1/4, հեռ.՝54-17-89, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100, ՀՎՀՀ 02504913

№ 68/1036
« 06 » հոկտեմբերի 2023 թ

«Գոռ Մատինյան» Ա/Ձ-ին

էլ. փոստ՝ gor.matinyan.84@mail.ru

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Գոռ Մատինյան» Ա/Ձ-ի միջև ապրանքի մատակարարման նպատակով 2023թ-ի հունիսի 02-ին կնքված թիվ «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-23/10-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայն կնքված պայմանագրի, «Գոռ Մատինյան» Ա/Ձ-ի կողմից ներառյալ 17.07.2023թ-նը պետք է մատակարարվեր 1-ին չափաբաժնով նախատեսված «LED սինխրոն լույսերի հավաքածու» ապրանքատեսակի երկու հատ լրակազմը:

«Գոռ Մատինյան» Ա/Ձ-ի կողմից «LED սինխրոն լույսերի հավաքածու» ապրանքը մատակարարվել է պայմանագրով սահմանված ժամկետից ուշ, ինչպես նաև մատակարարված ապրանքը չի համապատասխանել Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված տեխնիկական բնութագրերին, մասնավորապես՝

պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ «LED սինխրոն լույսերի հավաքածու» ապրանքատեսակի լրակազմը բաղկացած է չորս շրջանակից, սակայն փաստացի տրամադրված ապրանքատեսակը բաղկացած է մեկ շրջանակից:

Վերոհիշյալով պայմանավորված՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից «LED սինխրոն լույսերի հավաքածու» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրի մասով տրվել է բացասական եզրակացություն: Հետևաբար, հիմք ընդունելով Պայմանագրի 5.2 կետը, «Երքաղլույս» ՓԲԸ-ին 2023թ-ն օգոստոսի 03-ին ներկայացված N 01 հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 և 2.2.4 կետերը՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ն ծանուցել էր «Գոռ Մատինյան» Ա/Ձ-ին «LED սինխրոն լույսերի հավաքածու» ապրանքատեսակը, ներառյալ 2023թ-նի սեպտեմբերի 25-ը, Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան որակի ապրանքով անհատույց փոխարինելու համար:

«Գոռ Մատինյան» Ա/Ձ-ի կողմից, սահմանված ժամկետում, այն է՝ մինչև ներառյալ 2023թ-նի սեպտեմբերի 25-ը, «LED սինխրոն լույսերի հավաքածու» ապրանքատեսակը Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան որակի ապրանքով չի փոխարինվել և չի մատակարարվել:

Տեղեկացնումն ենք, որ «Գոռ Մատինյան» Ա/Ձ-ի կողմից խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Ուստի, հիմք ընդունելով 2023թ-ի հունիսի 02-ին կնքված թիվ «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-23/10-1» Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) ենթակետը՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-23/10-1» պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը Մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «Գոռ Մատինյան» Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում «Երքաղլույս» ՓԲԸ-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 1510004597930100 հաշվեհամարին փոխանցել 10118 (տաս հազար մեկ հարյուր տասնութ) ՀՀ դրամ՝ որպես յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա դիմաց տույժ՝ «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-23/10-1» Պայմանագրի 6.2 կետի համաձայն, սկսած 18.07.2023թ-ց մինչև 05.10.2023թ-նը ներառյալ, թվով 57 աշխատանքային օրերի համար և 1775(մեկ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Ինչպես նաև, «Երքաղլույս» ՓԲԸ-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 1510004597930100 հաշվեհամարին, որպես երաշխիքային ապահովում, ենթակա է վճարման 35500(երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես «Գոռ Մատինյան» Ա/Ձ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովում և 53250(հիսուներեք հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես որակավորման ապահովում, այլապես վերը նշված գումարները հաշվանցվելու են «Գոռ Մատինյան» Ա/Ձ-ին վճարվելիք այլ գումարներից:

Տեղեկացնում ենք նաև, որ անհրաժեշտ է 03.08.2023թ-ի դուրս գրված թիվ Բ 7927448510 հաշիվ վավերագիրը նվազեցնել «LED սինխրոն լույսերի հավաքածու» ապրանքատեսակի մասով և ներկայացնել պայմանագրի կատարման Հանձնման-ընդունման համապատասխան արձանագրություն ու պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ համապատասխան Ակտ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գոռ Մատինյան» Ա/Ձ-ի կողմից, ոչ ուշ, քան գնումների օրենսդրությամբ սահմանված 10 օրացուցային օր ժամկետի ընթացքում՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում, պայմանագրի կատարման ապահովման, որակավորման ապահովման և հաշվարկած տույժի գումարները վճարելու դեպքում, «Գոռ Մատինյան» Ա/Ձ-ի նկատմամբ չի նախաձեռնվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Ա. ԹԵՎՈՍՅԱՆ

Կատարողներ Ա. Արաբյան
Ա. Մինասյան
Հեռ. 010 54 39 80